Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Լեզվական կարողունակության և գրագիտության և մշակութային կարողունակությունների զարգացումը 7-րդ դասարանում Եղիշե Չարենց ուսումնասիրելիս
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Հակոբյան Ռուզաննա Քաջիկի մանկավարժ Մայրենի ,հայոց լեզու և գրականություն 5-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	ՀՀ Կոտայքի մարզ Մայակովսկի գյուղ «Հ.Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ Լ. Դուբյան փողոց2 2/4 022260145 lilitgevorgyan2007@gmail.com mayakovski@schoois.am

Բովանդակություն

Բովանդակություն
Հետազոտական աշխատանք----------1
Տիտղոսաթերթ----------1
Բովանդակություն----------2
Ներածություն----------3
Պարագրաֆներ/մասեր----------4
Գրականության ակնարկ----------4
Օգտագործված մեթոդները----------11
Եզրակացություններ,առաջարկություններ----------12
-Օգտագործված գրականության ցանկ----------13

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Լեզվական կարողունակության և գրագիտության և մշակութային կարողունակությունների բացահայտման միջոցով գրականությունը կապել կյանքին Արդյոք կնպաստեն այս կարողունակությունները գրականության

	թեման յուրացնելիս և գրագետ խոսքի ձևավորմանը
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Գրականության դասաժամին աշակերտը հաղորդակցվում է գրագետ և գրական հայերենով,լավ է ,երբ արժևորվում է նաև մշակութային ժառանգությունը և գնահատվում այն,միշտ էլ արդիական է գնահատել ունեցածը
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական կարողունակություն և գրագիտություն,Մշակութային կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր (10-15 էջ)

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,	.Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու

• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:Լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով): հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ

	վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով): • Սովորողները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ: Մշակութային կարողունակություն – Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական–քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական

պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և հաշակ:

Լեզվական կարողունակության և գրագիտության և մշակութային կարողունակությունները փորձել եմ զարգացնել Եղիշե Չարենց թեման ուսումնասիրելիս:Թեմային տվել եմ 6 դասաժամ և հնարավորինս մղել եմ աշակերտներին ինքնուրույն բացահայտումների ու վերլուծությունների:

1-ին դասաժամին կարճ դասախոսության միջոցով համառոտ ներկայացրել եմ Չարենցի կենսագրությունը ՝կարևորելով դասագրքում չգետեղված կենսագրական տվյալները՝աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու նպատակով,այնուհետև դասարանը բաժանել եմ 4 խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել տեքստից առանձնացնել ըստ իրենց ամենակարևոր մտքերը,10 րոպեից անցել եմ դասահարցման և մեկ խմբի դասահարցմանը զուգահեռ մյուս խմբերը ևս մասնակից են եղել նոր նյութի հաղորդմանը՝ըստ իրենց սովորած մասերի,այնուհետև խմբերը գնահատել են միմյանց աշխատանքները ,և ես փորձել եմ անաչառ լինել ,այնուհետև հանձնարարել եմ տանը սովորել պատմել դասն ամբողջությամբ և թվագրել գրողի կենսագրությունը գրականության տետրում,ապա դասարանը 7 խմբերի բաժանելուց հետո հանձնարարվել է յուրաքանչյուր խմբի ներկայացնել «Հիշողություններ Չարենցի մասին» նյութից մեկական հատված:Մեկնաբանություններից հետո աշակերտները իրենց կարծիքն հայտնելով Չարենց մարդ-բանաստեղծի մասին՝ զգացվեց, որ իրենց դուր է եկել նոր հեղինակը,այնուհետև ներկայացրել եմ նոր նյութը և Սիլվա Յուզբաշյանի կատարմամբ ցուցադրել եմ «Տաղ անձնական»բանաստեղծության տեսագրությունը,որը ներկայացված էր

Կարսի բնապատկերի համադրմամբ,այնուհետև հանձնարարվել է բանաստեղծությունը սովորել անգիր և մեկնաբանել այն,սովորել նաև բառարանում բացատրված բառերը և գրել բառատետրում,պատասխանել բանաստեղծությանը վերաբերող հարցերին և առաջադրանքներին բանավոր:

2-րդ դասաժամին արագ անգիրը իրար շարունակելով հարցնելուց հետո,անցել եմ նոր դասի հաղորդմանը,թեման՝«Տաղարան»շարքը,նախ բացատրել եմ ՝ինչ է ոճավորումը,և ինչ կապ ունի Սայաթ-Նովան տաղի հետ,այնուհետև դասարանը բաժանել եմ 4 խմբի՝յուրաքանչյուր խմբին հանձնելով «Տաղարան» շարքի մեկական օրինակ և հանձնարարելեմ յուրաքանչյուր խմբի կարդալ 5 բանաստեղծություն և ներկայացնել այնպես, ինչպես ընկալել են խմբերին տրվել է 10 րոպե ժամանակ ,պատրաստվելուց հետո խմբերը ներկայացրել են իրենց կարդացածի բովանդակությունը և բանաստեղծությունների միջև եղած նմանություններն ու տարբերությունները,աշակերտները վերջում գնահատել են յուրաքանչյուրն իր խմբի աշխատանքը:Ինքնագնահատումից հետո հանձնարարվել էամբողջ շարքը կարդալ տանը և սովորել վերլուծել իրենց դուր եկած տաղը:

Զարենց թեմայի 3-րդ օրը «Մտագրոհի» միջոցով ամփոփվել է նախորդ օրվա անցածը,այնուհետև դասարանը բաժանվել 4 խմբի և հանձնարարվել յուրաքանչյուր խմբի կարդալ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեկ տունը և նկարել՝ ըստ բանաստեղծության պատկերների, տրվել է 10 րոպե ժամանակ, այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացրել իր նկարածը և թե ինչպես է հասկացել բանաստեղծությունը, ապա «Քառաբաժան»աղյուսակով աշակերտներն արտահայտել են բանաստեղծությունից իրենց

	զգացածը:Դասի վերջում հանձնարարվել է անգիր սովորել բանաստեղծությունը և պատմել սովորել տաղի մեկնաբանությունը: 4-րդ դասաժամը սկսվում է դասահարցումով,բոլորը արտասանում են բանաստեղծությունից մի քառատող իմ հանձնարարությամբ, այնուհետև «Մտագրոհի» միջոցով աշակերտները ներկայացնում են բանաստեղծության մեջ ներկայացված պատկերները՝դրանք համեմատելով Մարտիրոս Սարյանի և իրենց իմացած մյուս նկարիչների նկարների հետ,պատուհանից ցույց են տալիս Արարատ լեռը՝այն համարելով հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշ:Այնուհետև հանձնարարում եմ կարդալ Մ.Սարյանի և Վիլյամ Սարոյանի խոսքերը «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մասին, և ինքս մեկնաբանում եմ դրանք՝ տալով «պաննո » բառի բացատրությունը:Հետո գծում եմ գրատախտակին պրիզմա,աշակերտները ինքնուրույն լրացնելուց հետո եկան այն եզրակացության,որ աշխատասիրությամբ ու սիրելով Հայաստանը կդարձնեն հզոր ու հաղթող:Հետո աշակերտները դուրս են գրում պատկերավորման միջոցները և փորձում նմանատիպ արտահայտություններ ստանալ:Գնահատվում են այն աշակերտները,ովքեր լիարժեք էին աշխատել:Այնուհետև անցնում եմ հաջորդ դասին՝«Հայրենիքում»,իմ ընթերցելուց հետո աշակերտներն անմիջապես նկատում են 2 բանաստեղծությունների տարբերությունները և փորձում են ինքնուրույն մեկնաբանել,վերջում հանձնարարվում է

	բանաստեղծությունը անգիր սովորել,իսկ մեկնաբանությունը՝ պատմել: 5-րդ դասաժամին աշակերտները արտասանում են բանաստեղծությունը և տալիս մեկնաբանությունը,այնուհետև անցնում եմ նոր դասի հաղորդմանը:Նախ մտագրոհով փորձում եմ պարզել,թե ինչպիսին են իրենց մայրիկները,ապա Նունե Ավետիսյանի կատարմամբ միացնում եմ տեսանյութը,որից հետո հանձնարարում եմ աշակերտներին մտքում կարդալ բանաստեղծությունը և ներկայացնել այն պատկերները,որոնք կան բանաստեղծության մեջ,ապա ներկայացնում եմ բանաստեղծության կառուցվածքը և բացատրում՝ ինչ է գազելը:Т-աձև աղյուսակի միջոցով աշակերտները ներկայացնում են Մայր և Հայրենիք բնորոշումները ,և ինչու են հայրենիքը կոչում մայր հայրենիք:Դասի վերջում գնահատվում են առավել ակտիվ աշակերտները: 6-րդ դասաժամը ամփոփման դասաժամն է :Դասարանը բաժանում եմ 4 խմբի՝ներկայացնելով կենտրոնների աշխատանքը, 1-ին խումբը բացահայտողների կենտրոնն է,որոնք իրենց անցած բանաստեղծությունների միջև փորձում են գտնել ընդհանրություններ և ներկայացնել, 2-րդ խումբը հետազոտողների կենտրոնն է ,որոնք ուսումնասիրելով այդ երեք բանաստեղծությունները պիտի ներկայացնեն հայ ժողովրդի անցած ուղին, 3-րդ խումբը ստեղծագործողների կենտրոնն է, որոնք այս երեք բանաստեղծությունների հիման վրա

	պաստառ են պատրաստում և գտնում այդ թեմաներով երգեր,4-րդ խումբը գրավոր աշխատանքների կենտրոնն է , որոնք, օգտվելով բանաստեղծությունների պատկերավորման միջոցներից ,արձակ շարադրանքի են վերածում տեքստերից մեկը:Խմբերին տրվում է 15 րոպե ժամանակ,որից հետո յուրաքանչյուր կենտրոն ներկայացնում է իր աշխատանքը:Ներկայացնելուց անմիջապես հետո խմբերին հանձնարարվում է գնահատել իրենց գիտելիքը «Վարդ,կոկոն,փուշ» գնահատման մեթոդով:Խմբերի ինքնագնահատումից հետո պարզ է դառնում,թե ով ինչքանով էյուրացրել թեման.վերջում խմբերին ձևավորող գնակատական տալուց հետո անցնում եմմիավորային գնահատմանը:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Ինդուկտիվ, գիտական, համեմատական
Իրականացման ժամանակահատվածը	6.09-30 .09
Թիրախ խումբը և շրջանակը	7-րդ դասարան Աղջիկ 11 Տղա 11

/քանակ, սեռային բաշխում/	

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հիմք ընդունելով հետազոտական աշխատանքում ներկայացված ուսումնասիրությունները՝եկել եմ հետևյալ եզրակացության՝ Լեզվական կարողունակություններն ու գրագիտությունը կարելի է հնարավորինս ի դերև հանել գրականության դասաժամերին, երբ ճիշտ է պլանավորվում դասաժամը և հաշվի են առնվում աշակերտների հնարավորությունները:Կարևոր է նաև գրականության յուրաքանչյուր թեմայի համապատասխան մեթոդի ընտրությունը:

	Ուշադրության կենտրոնում են եղել կրթության անբավարար պայմանների կարիք ունեցող երկու աշակերտները,որոնց առաջադրանքները խմբում բաժանելիս ես ուղղորդել եմ,իսկ անհատական հարցման դեպքում հաշվի եմ առել հնարավորությունները, նույն կերպ եմ վարվել նաև այն աշակերտների հետ,ովքեր առավել ընդունակ են և նրանց նկատմամբ ևս անհատական մոտեցում է ցուցաբերվել: Մշակութային կարողունակությունները բացահայտվեցին երգերի ընտրության ժամանակ և նկարիչների մասին խոսելիս,աշակերտները գաղափար ունեին հայկական ճարտարապետությունից, քանդակագործությունից մանրանկարչությունից :Իրենց համար հաճելի էր խոսել արվեստից ու հայ ժողովրդի մշակութային ժառանգությունից: Վերոնշյալ կարողունակությունները լիովին դրսևորվեցին Եղիշե Չարենց թեման 7-րդ դասարանում ուսումնասիրելիս:
Այլ տեղեկատվություն	Թեման անցնելիս կիրառել ենք հետևյալ մեթոդներով՝ Կենտրոններով աշխատանք,Խմբային աշխատանք,Մտագրոհ,Քառաբաժան,Պրիզ մա,Վեննի դիագրամ ,t-աձև աղյուսակ,Ինքնագնահատում,Խմբերով միմյանց գնահատում, «Վարդ,կոկոն,փուշ»

Օգտագործված գրականության ցանկ)

Օրինակ՝

1.https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/136_2.pdf

2.https://stepanyanhaykuhi.wordpress.com/

3.https://www.e-draft.am/projects/2560/about

4. 7-րդ դասարանի գրականության դասագիրք

5.12-րդ դասարանի էրեստոմատիա

6.Եղիշե Չարենցի գրքերից

Հավելվածներ








ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐՈՇԸ





Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ